

616.9

mu-34

2987

616.9

mu-34

2010

2002

616.9

մ-34

10920

616.9

մ-34

այս

Բժ. Ա. ԽԱՏԻՍԵԱՆ

610
108-ԽԱ

Խ Օ Լ Ե Ր Ա Ն

ԵՒ ՆՐԱ ԴԵՄ ԿՈՒԵԼՈՒ

ՄԻ ԶՈՑՆԵՐԸ

10920

Գ Ր Թ

46723-այ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրագործ սպարան «ՀԵՐՄԵՍ» Ս. Պ. Եղիազարեանի
1907 (7)

ԽՕԼԵՐԱՆ ԵՒ ՆՐԱ ԴԵՄ ԿՌԻԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

I

Խօլերան բաւական սակաւ է երեան գալիս թէ Կովկասում և թէ առհասարակ ուրիշ երկիրներում: Անցնում են տասնեակ տարիներ, իսկ խօլերայի մասին ոչինչ չէ լսում. բայց յանկարծ մէկը հիւանդանում է խօլերայով այս կամ այն քաղաքում, գլխաւորապէս ծովեզրեայ քաղաքներից մէկում, անմիջապէս խօլերան սկսւում է տարածուել ուրիշ մերձակայ քաղաքներն ու գիւղերը. հետզհետէ աւելի յաճախ են կըրկնւում հիւանդութեան դէպքերը. մեծ քաղաքներում հիւանդների թիւը հասնում է օրական հարիւր կամ նոյն իսկ հարիւրից աւելի հոգու, և վերջապէս ամբողջ երկիրը կամ նրա մի մասը բռնկւում է խօլերայով: Շատ տեղերի բնակիչների միևնոյն վարակիչ ցաւով հիւանդանալը կոչւում է եպիդեմիա կամ համաճարակ:

Երեան գալով մի որ և է տեղում, խօլերան մընում է այնտեղ անորոշ ժամանակ. մի քանի ամիս կամ մի ամբողջ տարի ու նոյն իսկ երկու տարի. այնուհետև խօլերայի հիւանդութեան դէպքերը հետզհետէ պակասում են և վերջապէս, բոլորովին ընդհատւում են:

Իբրև մօտակա՞ն սեւոյ հիւանդութիւն խօլերան գոյութիւն ունի ամենահին ժամանակներից ի վեր Հընդկաստանում (Ասիայում). այստեղից նա երբեմն անցնում է ուրիշ հարևան երկիրներ և ապա արդէն անցնում է մեզ մօտ ու Եւրոպա:

Առաջին անգամ խօլերան Հնդկաստանից անցաւ Եւրոպա մօտաւորապէս հարիւր տարի առաջ:

Առաջին խօլերայի էպիդեմիան Կովկասում, որի

մասին մենք ունինք մանրամասն տեղեկութիւններ, եղել է 1823 թ.: Նա անցել է մեզ մօտ Պարսկաստանից և, տարածւելով գլխաւորապէս Աստրախանի ու Բազրի նահանգներում, սահմանափակւել է այդ շրջաններով: Հինգ տարուց յետոյ խօլերան նորից երեան է գալիս Բազուում, բայց արդէն ոչ նախկին ուժեղ չափով: 1830 թ. բռնկւում է խօլերայի ամենասաստիկ էպիդեմիան, որի նմանը Կովկասը դեռ չէ տեսել: Ժողովուրդը մինչև այսօր էլ յիշում է դրա մասին և անւանում է նրան «մեծ խօլերա»: Նա տարածւեց ամբողջ Կովկասում, իսկ բազմաթիւ զոհեր, իսկ յաջորդ տարին անցաւ Եւրոպական Ռուսաստան, իսկ այնտեղից՝ արևմտեան Եւրոպան:

Խօլերայի հետեւալ էպիդեմիան երեան եկաւ Կովկասում «մեծ խօլերայից» մօտ 15 տարի անց, և մնաց Կովկասում համարեա երկու տարի:

Այդ օրանից սկսած խօլերան այցելել է Կովկասը էլի հինգ անգամ. ամեն անգամ էլ նա եկել է Ասիայից, անցնելով Պարսկաստանի և ուրիշ ասիական երկրների միջով:

Սովորաբար խօլերան ուժեղ կերպով տարածւում է ամառային տօթերին, բայց պատահում է և այնպէս, որ նա չէ դադարում նաև ձմեռը:

II

Նրանք, ովքեր գոնէ մի անգամ տեսել են խօլերայի էպիդեմիան, յիշում են հաւանականօրէն, թէ ինչպէս է արտայայտւում այդ հիւանդութիւնը: Մենք կը նկարագրենք առաջ խօլերայի թեթև տեսակը՝ խօլերային փոքրահալիք:

Շատ դէպքերում խօլերային փոքրահալիքը իր նշաններով ոչնչով չէ տարբերւում սովորական փորլուծութիւնից, այնուամենայնիւ նա երբեմն փոխւում է ամենածանր խօլերայի: Պատահում է և այնպէս, որ

ինքնըստինքեան թեթև խօլերային փորհարինքը վարակում է մի ուրիշին, որն արդէն հիւանդանում է ամենածանր խօլերայով:

Մօլերային փորհարինքի ժամանակ փորլուծութիւնը լինում է յաճախ, կղկղանքը՝ բաւական ջրալի, ստամոքսը կռկռում է, սիրտը խռոնում է, ապա սկսում է գլորտալ ու փսխել. հիւանդը զգում է սրտնեղութիւն, էսկ երբեմն սրտի յաճախ բաբախումն, ապա և ցաւ զանազան մկանունքներում, մանաւանդ սրունքներում. լեզուն, փառակալում է, ծարաւը սաստկանում է, ախորժակը կորչում: Յաւը սկսւում է կամ յանկարծ, երբ մարդ իրեն դեռ բոլորովին առողջ է զգում, կամ մրսելուց և կամ անչափ ուտելուց:

Մօլերայի այս տեսակը՝ խօլերային փորհարինքը՝ շարունակւում է երկու-երեք օր, իսկ երբեմն աւելի երկար և անցնում է շատ անգամ յաջողակ, դրանից մեռնում են յաճախ երեխաները, հարեցողները և առհասարակ թոյլ ու զառամած մարդիկ: Մօլերայի էպիդեմիայի ժամանակ անհրաժեշտ է իսկոյն և ամենաեռանդուն կերպով բժշկել ամեն տեսակի փորլուծութիւն և մանաւանդ այն փորհարինքը, որ մենք այժմ նկարագրեցինք: Եթէ փորլուծութեամբ հիւանդներն անուշադիր են թողնում իրենց հիւանդութիւնը և շարունակում են կերակրւել ու ապրել նոյն ձևով, ինչ կերպ նրանք ուտում ու ապրում էին առողջ ժամանակ, նրանց դրութիւնն արագ վատթարանում է:

Երբեմն էլ, ի հարկէ, հէնց սկզբից արդէն հիւանդութիւնն ընդունում է կատաղի ու վտանգաւոր կերպարանք, փորլուծութիւնը լինում է խիստ յաճախ, կղկղանքը հետզհետէ դառնում է անգոյն կամ գորշ հեզուկ, խառնած դեղնագոյն կամ գորշ մասնիկների հետ, որոնք շատ նման են եփած բրինձի ջրին, ինչու համար կղկղանքն էլ կոչւում է բրինձէ կղկղանք: Այս

կղկղանքը համարեա ամենաին հոտ չունի: Որքան սաստիկ է լինում փորհարինքը, այնքան էլ քիչ է գալիս մէզը, իսկ երբեմն նոյն իսկ բոլորովին կանգնում է: Հիւանդը փխսում է շատ ուժեղ կերպով և յաճախ, փսխածը նոյնպէս նման է եփած բրինձի ջրին: Նա զգում է ամբողջ մարմնի մէջ թուլութիւն. գիտակցութիւնը բթանում է, թախիծը պատում է նրան, մարմինը սկսում է կծկւել, երևան են գալիս ցաւեր՝ առաջ ոտների մէջ և ապա անցնում են ձեռքերին ու ամբողջ մարմնին: Հիւանդութեան այս տեսակը կոչւում է խօլերա:

Մի քանի դէպքերում, երբ խօլերայով հիւանդը չէ լաւանում, այլ ընդհակառակը դրութիւնն աւելի ևս վատթարանում է, նրա փորլուծութիւնը դառնում է այնքան յաճախ, իսկ կղկղանքն այնքան ջրալի, որ մարդու արիւնը, շնորհիւ աղիքներից դուրս եկած ջրին, սաստիկ թանձրանում է. հիւանդի դէմքը դունատւում է և տեղ տեղ կապտում. մարմնի կաշին պաղում է, կնճռոտւում, թառածում և ծածկւում կաշուն քրտինքով. ջղաձգութիւններն ու մկանունքների ցաւերը խիստ սաստկանում են, հիւանդը բոլորովին կորցնում է ապրելու ցանկութիւնը և ամբողջ մարմինը բոլորովին թուլանում է: Մէզը կանգնում է, զարկերակն ու սիրտը թուլանում են և հետզհետէ համարեա դադարում բաբախելուց, փսխումը կրկնւում է օրական մինչև 20 անգամ, իսկ երբեմն էլ հիւանդն արիւն է փխսում. շնչառութիւնը ծանրանում է, հիւանդը արագ լղարում է, կարծեա հալւում է, այտոսկրն ու քիթը սրանում են, աչքերը փոս են ընկնում. հիւանդը խօսում է բարձր, բայց թոյլ ձայնով:

Այս դրութեան մէջ զանաւոր հիւանդների կղկղանքը լինում է անգոյն հեզուկ, որ դուրս է գալիս առանց նիք տալու. փսխումը սաստկանում է և լինում է ա-

ռանց ըզկոցի:

Այսպիսի ծանր խօսերայով հիւանդները շատ սա-
կաւ են առողջանում. սովորաբար նրանք մեռնում են,
հետզհետէ աւելի և աւելի թուլանալով: Հազադիւտ
դէպքերում են այդպիսիներն առողջանում: Ընդհանուր
առմամբ խօսերայի հիւանդութիւնը կարճատեւ է. նա
տեղում է երկու-երեք օրից սկսած մինչև 6—8 օր:

Պատահում են խօսերայի և այնպիսի դէպքեր,
երբ հիւանդութիւնը տեղում է միայն մի քանի ժամ.
հիւանդութեան հէնց սկզբում, առաջին ժամայ ըն-
թացքում, մարդ, որ մինչ այդ բոլորովին առողջ էր,
յանկարծ ընկնում է, կարծես շանթահար եղած լի-
նի, և մի քանի ժամից յետոյ վախճանւում է: Խօսե-
րայի այս տեսակի դէպքերում տեղի չեն ունենում ա-
ռանձին փորլուծութիւն կամ փսխումն:

III

Ծանօթանանք մօտիկից խօսերայի հետ, աշխա-
տենք պարզելու, ի՞նչից է նա առաջ գալիս ի՞նչպէս է
նա տարածւում և ի՞նչ միջոցներով կարելի է նրա
դէմ կռուել:

Արդէն շատ վաղուց նկատւած է, որ կան հիւան-
դութիւններ, ինչպէս օրինակ ծաղիկը, կարմրուկը ու
դիֆտերիտը, որոնք մի մարդուց անցնում են միւսին:
Այդպիսի հիւանդութիւններ կոչւում են վարակիչ կամ
կաշոյ: Այդ հիւանդութիւնների շարքին է պատկանում
և խօսերան:

Վարակիչ հիւանդութիւնները առաջանում են նը-
րանից, որ մարդու մարմնի մէջ մտնում են օդի հետ,
երբ մենք շունչ ենք քաշում, խմելու ջրի հետ, կերա-
կրի հետ, փոշու հետ կամ վերջապէս կեղտի հետ, որ
ընկնում է մարմնի վրայ եղած փոքրիկ վէրքի մէջ կամ
ճանկոտած տեղը, չափազանց մանր կենդանի էակներ,
որոնց աչքով չի կարելի տեսնել և որոնք կոչւում են

բակտերիաներ: Նրանց կարելի է տեսնել, եթէ նայելու
լինինք խոշորացոյցով:

Խոշորացոյցով նայելուց մենք կը տեսնենք, որ
այդ կենդանի էակներն ունին տարբեր ձևեր. մի քա-
նիսը նման են ոլորած թելի, միւսները՝ ցուպիկների
կամ ստորակէտի, իսկ ոմանք էլ կլոր ձև ունին և այլն:

Բակտերիաները բազմանում են չափազանց արագ:
Բաւական է, որ մի բակտերիա ընկնի այնպիսի տեղ,
ուր նա կարող է կերակրւել ու աճել, ինչպէս օրի-
նակ, մարդուս բերանն է, որտեղ կայ թուք ու կերա-
կրի մնացորդներ, կամ թէ մի կաթիլ ջրի կամ ուրիշ
հեղուկի մէջ,—որպէս զի մի ժամայ ընթացքում նը-
րանից առաջանայ միլիօնաւոր սերունդ: Բակտերիայի
կեանքի յարատեւութիւնը կախած է նրանից, թէ որ-
տեղ է նա ընկնում: Այսպէս, օրինակ. սենեակի ջեր-
մութեան աստիճանում բակտերիաները կարող են
շատ երկար ապրել կաթի, ջրի, բուլիօնի մէջ. իսկ
չոր տեղերում, տաք վառարանում, հոացող ջրի մէջ,
կրակում և մի քանի թունաւոր հեղուկների մէջ, ինչ-
պէս են՝ սուլեմա, կարբօլ, կրաջուրը,—նրանք անմի-
ջապէս ոչնչանում են:

Դրա համար էլ բակտերիաներին սպանում են
եռացող ջրով, կրակով ու թունաւոր հեղուկներով, երբ
այդ հարկաւոր է լինում: Բակտերիաների այդ միջոց-
ներով ոչնչացնելը կոչւում է դեզինֆեկցիա:

Բակտերիաները կերակրւում են զանազան նիւ-
թերով, որոնք գտնւում են ջրի, կաթի, աղիքների,
ստամոքսի, ցեխի մէջ. մի խօսքով համարեա ամեն
տեղ, ուր նրանք գտնւում են իրենց համար ապաստան
ու մնունդ:

Բակտերիաները, ընկնելով գլխաւորապէս բերա-
նի միջով մարդուս մարմնի մէջ, բազմանում են ու
տարածւում նրա զանազան մասերում: Նրանք արտա-

դրում են մի առանձին թոյն, որ ներս է ծծւում մարդուս մարմնի մէջ, թունաւորում է նրան և ապա առաջ բերում այս կամ այն հիւանդութիւնը: Իւրաքանչիւր հիւանդութիւն առաջ է գալիս իր յատուկ բակտերիաներից: Դրա համար էլ ջոկում են բակտերիաները իւրաքանչիւր, նայած հիւանդութեան. այսպէս տարբեր են դիֆտերիաի բակտերիաները, ժանտախտինը, խօլերայինը, թոքախտինը և այլ հիւանդութիւններինը: Իւրաքանչիւր խօլերայով հիւանդի աղիքներում գտնւում են միլիօնաւոր այդպիսի բակտերիաներ, մանաւանդ շատ են նրանք հիւանդի արտաթորութիւնների, փրսխումի ու թքի մէջ. նրանք լինում են նաև հիւանդի սպիտակեղէնի, շորերի, ձեռքերի վրայ և առհասարակ հիւանդի մարմնի վրայ, որովհետև խօլերայով հիւանդներն երբեմն իրենց վրայ են թափում փսխածը և պարկած են լինում իրենց կողպանքի մօտ:

Այստեղից պարզ երևում է, որ իւրաքանչիւր մարդ, որ խօլերայով հիւանդի կղկղանքի ու փսխածի հետ գործ է ունենում, բակտերիաները կարող են նրա վրայ էլ անցնել, և նա էլ կը վարակւի խօլերայով: Երբեմն ինքը հիւանդը իր հիւանդութեան դեռ սկզբում կամ նոյն իսկ առողջ մարդը, որի վրայ ընկել են բակտերիաները, տարածում է իր հետ վարակիչ ախտը: Շատ հեշտութեամբ է տարածւում վարակիչ ախտը, երբ հիւանդին շրջապատող կամ նրա հետ յարաբերութեան մէջ եղած անձինք տալիս են մէկ ուրիշին հիւանդի շորերը կամ այլ իրեղէններ, որոնց վրայ սովորաբար բակտերիաները շատ-շատ են լինում: Երբեմն տարափոխիկ հիւանդութիւնը տարածւում է նոյն իսկ նամակների կամ ծրարների միջոցով, որ ուղարկում են իրենք հիւանդները կամ այն տնից, ուր կան հիւանդներ: Այստեղից պարզ է, թէ ինչպէս է տարածւում խօլերան մի քաղաքից միւսը, մի գիւղից՝ հարե-

ւան գիւղը: Մարդկանց հետ միասին խօլերայի բակտերիաները տարածւում են երկաթուղիներով, շոգենաւերով, գիւղական ճանապարհներով, կարաւաններով և առհասարակ այն բոլոր միջոցներով, որոնք մարդիկ գործ են ածում իրենց տեղափոխութեան համար: Հէնց այս ճանապարհներով էլ ամենից շատ տարածւում է էպիդեմիան: Երբեմն, պատերազմների ժամանակ, զօրքերն են տարածում բակտերիաները: Նոյն հիման վրայ տարածւում են վարակիչ ախտը և բանւորները, գաղթականները, ուխտաւորները, քոչւորները, որոնք մի տեղից միւսն են անցնում: Վերջին 1892 թ. էպիդեմիայի ժամանակ Բագրից հեռացած բնակիչները տարածեցին խօլերան ամբողջ Կովկասում:

Եթէ մարդ, որ ունի խօլերայի բակտերիաներ, ընկնում է մի տեղ, ուր ժողովւած է մարդկանց մեծ բազմութիւն, ինչպէս տօնավաճառներն են կամ ժողովրդական հանդէսները, նա, ի հարկէ, կարող է վարակել շատ մարդկանց:

Հիւանդութեան տարածման մէջ, բացի ճանապարհորդներից ու խօլերայով հիւանդի ու նրա իրեղէնների հետ գործ ունեցողներից, մեծ դեր են խաղում աղբահորերն ու արտաքնոցները, ուր թափում են խօլերայով հիւանդի արտաթորութիւնները:

Եթէ աղբահորերի պատերը այնպէս են շինած, որ կարող են ներս ծծել հորերի աղբը, այդ դէպքում արտաթորութիւնների մէջ եղած բակտերիաները հեշտութեամբ կարող են ընկնել թէ գետնի տակի և թէ խմելու ջրի մէջ, ինչպէս, ջրհորների ջուրն է, այն ժամանակ նրանք ամենքը, ովքեր գործ են ածում այդպիսով վարակւած ջուրը, կարող են հիւանդանալ խօլերայով:

Էպիդեմիայի տարածելու մէջ արտաթորութիւնները առհասարակ ունին մեծ նշանակութիւն: Հիւանդ-

ները գիւղերում, հիւանդութեան սկզբում, յաճախ դուրս են գնում ուղղակի առուների ու խանդակներէ մէջ, որտեղից մարդիկ ջուր են վերցնում խմելու ու այլ տնտեսական կարիքների համար: Նոյն ձևով վարակում են երբեմն և ջրհորները:

Առհասարակ յայտնի է, որ այն քաղաքներում ու գիւղերում, որտեղ տները, փողոցները, բակերը աղտոտ են պահում, որտեղ թափում են արտաթորութիւնները, ամեն տեսակ աղբ ու սառկած կենդանիներ ուղղակի գետնի վրայ, կամ գիւղի միջով անցնող գետակը ապականւում է կենդանիների արտաթորութիւններով, — խօլերան զարգանում է շատ ուժեղ կերպով:

IV

Սակայն չը պէտք է կարծել, որ իւրաքանչիւր մարդ, որի մարմնի մէջ ընկնում է խօլերայի բակտերիան՝ անպայման պիտի հիւանդանայ. իսկ հիւանդանալուց՝ անպատճառ պիտի մեռնի:

խօլերայով հիւանդանում են ամենից շուտ նրանք, որոնք առհասարակ թոյլ են առողջութեամբ, սակաւարիւն են, ունին ստամոքսի կատարը, հարբեցող են, ուլքեր ուտում են խակ կամ փտած միրգ, հում բանջարեղէն, խմում են թթու գինի ու անխտիր ամեն տեսակ ջուր, յաճախ մրսում են, չեն հետևում իրենց առողջութեան և որոնց ստամոքսը յաճախ խանգարւում է: Այսպիսի անզգոյշ հիւանդները դժւարութեամբ էլ առողջանում են: Պարզ է, ուրեմն, թէ որքան կարևոր է, կերակրին ու ստամոքսին հետևելը, ու աշխատել ամեն կերպ չը խանգարելու ստամոքսը: Մինչդեռ Կովկասի մի քանի տեղերում բնակիչները ամառն ու աշնանը համարեա բացառապէս կերակրւում են մրգեղէնով ու բանջարեղէնով. ուտում են սեխ, ձմերուկ, սերկևիլ. երբ նրանք հասած ու թարմ են՝ ֆլասակար

չեն, հետևաբար հարկաւոր է ուտել մեծ ընտրութեամբ և նախօրօք լանալ մաքուր ջրով:

V

Եւթմ մենք կանգ կառնենք այն պայմաններէ վրայ, որոնք կարող են խօլերային էպիդեմիայի զարգացման առաջն առնել կամ թուլացնել:

Ահագին նշանակութիւն ունի առհասարակ բոլոր տարափոխիկ հիւանդութիւնների, ինչպէս և խօլերայի առաջն առնելու համար բակերի, հրապարակների ու փողոցների մաքրութիւնը. անհրաժեշտ է նաև լաւ շինել ու մաքուր պահել աղբահորերը, տանել բոլոր անմաքրութիւնները գիւղի սահմաններից դուրս, հակել, որպէսզի կենսական մթերքները, մանաւանդ մրգեղէնները լինին ընտիր ու թարմ: Յատուկ ուշադրութիւն պիտի դարձնել մաքուր պահելու բոլոր այն տեղերը, որտեղ հաւաքւում են շատ մարդիկ, ինչպէս են օրինակ՝ կրպակները, միկիտանները, իջևանները, խանութները, ժողովատեղիները, գոմի օդանները, քարւանսարաներն ու հիւրանոցները: Բոլոր այս հիմնարկութիւններում պիտի լինին խոր աղբահորեր:

Ապա պէտք է մեծ հոգ տանել լաւ մնունդ ունենալու վրայ. ի հարկէ չքաւոր մարդու համար դժւարին է միշտ առողջարար կերակուր ունենալը, բայց և այնպէս, նա էլ ըստ հնարաւորութեան, պիտի աշխատէ ստանալ լաւ մնունդ՝ կաթ, միս, իւղ, բանջարեղէն. մանաւանդ լաւ պիտի կերակրել երեխաներին ու հետևել նրանց ստամոքսին:

Հարկաւոր է հափաւոր աշխատել ու շատ չը յոգնել. պէտք է հոգ տանել հափից դուրս չը յոգնելու, մանաւանդ դաշտային աշխատանքների ժամանակ. բանելիս պէտք է և կուշտ ուտել, խոյս տալով պասւայ կերակուրներից: Պասւայ կերակուրները աւելի ծանր են ստամոքսի համար և ամբարն սննդարար չեն, ինչ-

քան ուստիսանը: Անշուշտ նոյնպէս դժւարին է չքաւոր մարդու համար ունենալ տաք, լուսաւոր ու ընդարձակ սենեակներ: Դրա համար էլ մութ ու խոնաւ սենեակներում ապրողները պէտք է յաճախ բաց անեն լուսամուտները, օդանցքները և կանոնաւոր կերպով մաքրեն սենեակների օդը:

VI

Եթէ հաստատ յայտնի է, որ խօլերայով հիւանդը նախընթաց օրը կերել է վարունգ կամ մի այլ միրգ, ինչպէս այդ յաճախ տեղի է ունենում, այդ դէպքում հարկաւոր է ամենից առաջ տալ նրան լուծողական, օրինակ, կաստօրի (գերչագի) իւղն մի անգամից երկու ճաշի գդալ:

Իսկ եթէ հաստատ յայտնի չէ, որ նա միրգ է կերել, կամ եթէ հիւանդն արդէն լաւ լուծել է, աւելի նպատակայարմար է կլիզմա դնել 6—8 բաժակ գոլ ջրով աղիքները մաքրելու համար: Միաժամանակ պէտք է հիւանդի փորի վրայ կապել մանանեխի սպեղանի կամ մի քսակ լի չոր ու տաք թեփով:

Եթէ հնարաւորութիւն կայ, լաւ է, որ հիւանդը տաք վաննա ընդունի. դրանից յետոյ խաշիլ դնել, պառկեցնել տաք անկողին և ապա տաք շիշեր դնել չորս կողմից:

Հիւանդին կերակրելու համար պէտք է տալ ոչ խարի մօից սուպ, կարմիր գինի, ձու տաք թէյ և ձւի սպիտակուցից ջուր, խառնելով շաքար ու կօնեակ:

Թէյն աւելի լաւ է տալ կօնեակով, եթէ կօնեակ կայ տանը. կարելի է ածել թէյի մէջ նաև բոմ ու կարմիր գինի:

Շատ ծարաւած ժամանակ կարելի է տալ մաքուր սառուց, որ հիւանդը պիտի կուլ տայ, կամ գէլատինի ջուր:

Միևնոյն ժամանակ պէտք է տաքացնել հիւանդի

մարմինը, քսելով մանանեխի կամ քափուրի սպիրտ. իսկ եթէ սրունքները սկսում են շատ ցաւել, պէտք է տրորել ոտները չոր թաւոտ սրբիչներով կամ կոշտ խողանակով:

Մարմինը կարելի է մերսել նաև մանանեխի ըսպիրտում թրջած մահուդէ կտորով կամ անձեռոցներով: Եթէ տանը գրագէտ մարդ կայ, կարելի է, ի հարկէ, պահել տանը նաև մի փոքրիկ դեղարկղ, որտեղ պէտք է դնել՝ վալերիանի կաթիլներ, բօտկինի կաթիլներ, կաստօրի իւղ, լուծողական դառն ջուր, քինաքինա, և մի քանի ուրիշ դեղեր հիւանդի մարմինը մերսելու համար ինչպէս օրինակ մանանեխի ու քափուրի սպիրտ:

Այս յիշած դեղերից վալերիանի կաթիլները գործ են ածում հիւանդի ոյժերը վերականգնելու համար. պէտք է խմել օրական երեք անգամ 15-կան՝ կաթիլ մի գդալ ջրի հետ: Բօսկինի կաթիլները ընդունում են փորլուծութեան առաջն առնելու համար օրական 3—4 անգամ 20-կան կաթիլ նոյնպէս ջրով: Փորհարինքի ժամանակ լաւ է նոյնպէս խմել կարմիր գինի ու տաք փորկալներ հազնել:

Ստամոքսի խանգարման կամ փորկապութեան ժամանակ պէտք է ընդունել երկու գդալ կաստօրի իւղ կամ 1—2 բաժակ լուծողական դառն ջուր:

Քիմաֆինան ընդունում են տենդի ժամանակ 6—8 գրան միանգամից: (Լաւ է քինաքինան պահել տանը արդէն պատրաստած իւրաքանչիւր անգամին ընդունելու համար. կշռել կարող են դեղատանը, կամ բժշկի, ֆէլդշերի ու քահանայի տանը):

Եթէ հիւանդը սկսում է առողջանալ, նրա կղկը դանքը դառնում է աւելի թանձր, լուծում է աւելի սաւալաւ, և հետզհետէ արտաթորութիւնները ընդունում են սովորական դեղին գոյնը:

Փսխումը դադարում է, մէզը նորից սկսում է

դալ, կաշին կարմրում ու տաքանում է զարկերակն ու սիրտը կանոնաւոր բանում է, ցաւերը անցնում են, ախորժակը բացւում է, մի խօսքով հիւանդը կազդուրւում է և սկսում է նորից հետաքրքրւել, թէ ինչ է կատարւում իր շուրջը:

Առողջանալու միջոցին հիւանդը պէտք է չափազանց զգոյշ լինի կերակրի վերաբերմամբ. պէտք է ուտի քիչ և ամենաթեթև ու ջրալի կերակուրներ՝ ձու, կաթ, թէյ գինիով, բուլիօն. լաւ է ընդունել տաք վաննաներ օրական 2—3 անգամ, եթէ ի հարկէ հիւանդը այդ հնարաւորութիւնն ունի:

Առողջանալուց յետոյ հիւանդները դեռ երկար ժամանակ զգում են իրենց թոյլ, հետեաբար և շատ հեշտութեամբ կարող են վերստին հիւանդանալ. դրա համար էլ հիւանդները պէտք է խոյս տան ծանր, յոգնեցուցիչ աշխատանքներից և պահպանեն իրենց մրսելուց:

Երբեմն հիւանդները մի տնգամից ամբողջովին չեն կազդուրւում. պատահում է որ մէզը դեռ մի առժամանակ չէ գալիս, հիւանդը սկսում է ջերմել, կաշւի վրայ ցան է երևան գալիս, բերանի, կոկորդի, ստամոքսի ու աղիքների մաղասային թաղանթը բորբոքւում է. պատահում է, որ սկսում է նաև հագել:

Այս բոլոր բարդութիւնները դարմանում են բժշկները, որպէս սովորական հիւանդութիւններ:

Եթէ գիւղում, որտեղ մէկը խօլերայով հիւանդանում է, կայ բժիշկ կամ ֆէլդշէր, ի հարկէ, անպատճառ պէտք է կանչել նրանց: Իսկ քաղաքում միշտ կան շատ բժիշկներ, և նրանց օգնութեանն էլ անհրաժեշտ է հիւանդանալուց անմիջապէս դիմել:

Սովորաբար քաղաքներում և մեծ գիւղերում խօլերայի համաճարակի ժամանակ շինում են առանձին հիւանդանոցներ, կամ այսպէս կոչւած բաւակներ

խօլերայով հիւանդների համար: Այստեղ ամեն ինչ նախօրօք պատրաստւած է խօլերայով հիւանդներին ընդունելու համար, հետեաբար և բոլոր խօլերայով հիւանդները կարող են ամենայն վստահութեամբ գնալ հիւանդանոց և պարկել այնտեղ: Շատ մարդիկ են ազատել իրենց կեանքը մահից, ժամանակին գնալով բարակները:

Բայց և այն դէպքում, եթէ անկարելի է լինում իսկոյն ճարել բժիշկ կամ ֆէլդշէր, կամ թէ որ և է պատճառով անհնարին է հիւանդին անմիջապէս ուղարկել հիւանդանոց, կարիք չըկայ վատուելու ու դիմելու հէքիմներ կամ տատմէրների օգնութեան: Սրանք չը գիտեն հիւանդներին բժշկել, այլ օգուտելով ժողովրդի տգիտութիւնից թալանում են նրան:

Հէքիմները խօլերան բժշկում են արիւն առնելով, տառ վաննաներով, վրան ջուր ածելով, սխտորով ու աղօթքներով:

Այս բոլոր միջոցներից հիւանդի դրութիւնը միայն աւելի վատթարանում է. հէքիմները յաճախ սպանում են հիւանդներին շնորհիւ իրենց տգիտութեան:

Ամենից լաւն է, որ մարդ ինքը գիտենայ, թէ ինչպէս և ինչով կարելի է օգնել հիւանդին սկզբում, գոնէ մինչև բժշկի գալը:

Ով գիտէ, թէ ինչից է առաջ գալիս խօլերան և ինչպէս պէտք է նրա դէմ կուել՝ նրա համար խօլերան երկիւղալի չէ:

Ի վերջոյ չեն ասում, որ «գիտութիւնը՝ լոյս է, իսկ տգիտութիւնը՝ խաւար»:

Գիտութեան մէջ է մարդու զօրութիւնը:

2987

2013

«Ազգային գրադարան»



NL0074247

